

Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը
թվինինգ ծրագրի միջոցով

AM09/ENP-PCA/TP/04

Առաքելության զեկույց

SZS հանրության վիճակագրություն

Գործունեություն Զ1-Զ2: Խնդիրների բացահայտում

Ծրագրի մասնակիցներ

Գեդիմանաս Սամուլիս (Լիտվայի վիճակագրական ծառայություն)

Ագնես Տասսի (Դանիայի վիճակագրական ծառայություն)

Մարտին Լունդո (Դանիայի վիճակագրական ծառայություն)

Հայաստան, Մայիսի 2–6. 2011

Տարբերակ 1-ին վերջնական

ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն	Լիտվայի վիճակագրական ծառայություն	Դանիայի վիճակագրական ծառայություն

Հեղինակների կոնտակտային տվյալներ

Գեդիմանաս Սամուլիս
Գեդիմինո պողոտա 29
LT-01500 Վիլնուս
Լիտվա
Հեռ. +370 5 2364 621
Gediminas.Samuolis@stat.gov.lt

Ազնե Տասսի
Sejrøgade 11
DK-2100 Կոպենհագեն Ø
Դանիա
Հեռ. +45 39173367
ata@dst.dk

Մարտին Լունդո (*Բաղադրիչի ղեկավար*)
Sejrøgade 11
DK-2100 Կոպենհագեն Ø
Դանիա
Հեռ. +45 39173873
MLU@dst.dk

Բովանդակություն

2.	Ամփոփ նկարագիր.....	Fejl! Bogmærke er ikke defineret.
3.	Ընդհանուր մեկնաբանություններ	Fejl! Bogmærke er ikke defineret.
4.	Գնահատում և արդյունքներ	7
4.1.	ՀՀ ԱՎԾ-ի ՏՀՏ վիճակագրության ներկայիս իրավիճակը	8
4.2.	“Ձեռնարկությունների Ինկուբատոր” հիմնադրամի(ՁԻՀ) կողմից հավաքագրվող տվյալները	9
4.3.	Օգտագործողների կարիքները	Fejl! Bogmærke er ikke defineret.
4.4.	Հնարավոր խոչընդոտները	Fejl! Bogmærke er ikke defineret.
5.	Ամփոփում և առաջարկություններ	10
6.	Հետազոտության կառուցվածքի նախապատրաստում	11
6.1.	Հետազոտության նպատակի սահմանում	12
6.2.	Ընդհանուր հետազոտության նախագծի վերաբերյալ որոշում	12
6.3.	Օգտագործողի կարիքների և հետազոտության շրջանակի սահմանում	12
6.4.	Հարցաշար.....	13
6.5.	Թիրախային համակցության սահմանում	13
6.6.	Ընտրանք	Fejl! Bogmærke er ikke defineret.
6.7.	Տվյալների հավաքագրում, մշակում և վերլուծություն	15
6.8.	Փաստաթղթավորում և տարածում	15
6.9.	Առաջադրանքներ մինչև հաջորդ առաքելությունը	16
6.10.	Թվինինգ նախագծի ավարտից հետո	16
7.	Հավելվածներ	17
	Հավելված 1: Տեխնիկական առաջադրանք	17
	Հավելված 2: Առաքելության ծրագիրը	Fejl! Bogmærke er ikke defineret.
	Հավելված 3: Հանդիպումներ անձանց հետ	21
	Հավելված 4: ՀՀ ԱՎԾ-ի կողմից հավաքագրվող ՏՀՏ վիճակագրությունը	22
	Հավելված 5: PowerPoint ներկայացումներ	23
	Հավելված 6: Գործունեությունների ժամանակացույց	23
	Հավելված 7: Առաքելությունների ժամկետների նախագիծ պլանավորում	26
	Հավելված 8: Մինչև հաջորդ գործունեությունը ՀՀ ԱՎԾ-ի կողմից անհրաժեշտ գործողությունների իրականացում	27
	Հավելված 9: ՏՀՏ վիճակագրության գործող միջազգային հաշվետու համակարգերը ..	27
	Հավելված 10: Ցուցանիշների և թեմաների ցուցակ –ԱՊՓ նախագիծ առաջարկ	28
	Հավելված 11: Եվրոստատի 2011 հարցաշարի մոդել	38

1. Հապավումներ ցանկ

ՇԵ	Շահառու երկիր
ԱՊ	Անդամ Պետություն
ԱՊՓ	Անդամ Պետությունների փորձագետներ
ՏԱ	Տեխնիկական առաջադրանք
ՀՀԱՎԾ	Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական
ծառայություն	

2. Ամփոփ նկարագիր

Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությունը արդեն կազմում է ՏՀՏ վիճակագրություն առաջարկի մոտեցմամբ (ՏՀՏ հատված), ինչպես նաև մասնակիորեն պահանջարկի մոտեցմամբ (տնային տնտեսություններում ՏՀՏ օգտագործումը):

Ձեռնարկություններում և հաստատություններում ՏՀՏ-ի օգտագործման վերաբերյալ հետազոտությունը կլրացնի Հայաստանի տեղեկատվական հանրության ընդգրկման կարևոր բացը: Հիմնական շեշտը կդրվի ձեռնարկություններում ՏՀՏ օգտագործման հետազոտությանը համաձայն ԵՄ չափանիշների, մինչդեռ պետական կառավարման մարմինները ընդգրկված չեն ԵՄ շրջանակի մեջ: Այնուամենայնիվ, կիրականացվի փորձառական հետազոտություն սահմանափակ քանակությամբ պետական կառավարման մարմինների համար՝ հիմնվելով ձեռնարկությունների հետազոտության հարցաշարի վրա:

Գործունեության ընթացքում չեն նկատվել որևէ էական տեխնիկական, կազմակերպչական, կամ իրավական խոչընդոտներ հետազոտության իրականացման համար: Այնուամենայնիվ, հետազոտության իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսները պետք է դեռ տրամադրվեն: Հետազոտության անցկացման համար կազմվել է ժամանակացույց, որը կօժանդակի բյուջեի կազմման գործընթացին:

Մինչև հաջորդ գործունեությունը անհրաժեշտ է պարզել օգտագործողների կարիքները և կազմել համապատասխան ցուցանիշների նախագիծ, որոնք կընդգրկվեն հետազոտության մեջ:

3. Ընդհանուր մեկնաբանություններ

Առաքելության զեկույցը նախապատրաստվել է Հայաստանի հանրապետության ազգային վիճակագրական ծառայությունում: ԱՊ փորձագետները շնորհակալություն են հայտնում բոլոր ներկայացուցիչներին օժանդակության և տրամադրված առկա և ապագա իրավիճակի վերաբերյալ արժեքավոր տեղեկատվության համար, ինչպես նաև փորձագետների հանդեպ Հայաստանում գտնվելու ժամանակ ցուցաբերաց բարյացակամ օժանդակության համար:

Տեղեկատվական հանրության, Բաղադրիչ Զ հիմնական և պարտադիր նպատակն է առաջին հերթին իրականացնել և հրատարակել տեղեկատվություն ձեռնարկություններում և հաստատություններում ՏՀՏ-ի օգտագործման վերաբերյալ հետազոտության արդյունքները նախքան ԹՎԻՆԻՆԳ ծրագրի ավարտը և այնուհետև վերապատրաստել ՀՀ ԱՎԾ-ի աշխատակիցներին տեղեկատվական հանրության համար վիճակագրության խնդիրների վերաբերյալ:

Առաջին առաքելությունը նվիրված էր հետևյալ հարցերին՝

1. Գործունեության նպատակը

- Ստանալ ՀՀ ԱՎԾ-ի կողմից կազմվող առկա ՏՀՏ վիճակագրության նկարագիրը
- Քննարկել ԵՄ կանոնակարգերը և առաջարկությունները ՏՀՏ-ի օգտագործման վիճակագրության վերաբերյալ
- Ներկայացնել ԱՊ հաշվետվության ձևերը, որոնք առնչվում են ձեռնարկությունների և հաստատությունների ՏՀՏ-ի օգտագործմանը
- Համապատասխան քննարկումների մեջ ներգրավել արտաքին շահառուներին

2. Գործունեության ակնկալվող արդյունքները

- ՏՀՏ-ի օգտագործման վիճակագրության մեջ ընդգրկվող միավորների տեսակների հայեցակարգային որոշում
 - ՏՀՏ հանրության վիճակագրության համատեքստում ձեռնարկությունների սահմանում
 - ՏՀՏ հանրության վիճակագրության համատեքստում հաստատությունների սահմանում
- ՏՀՏ-ի օգտագործման վերաբերյալ այլ հիմնական գաղափարների քննարկում և սահմանում – մեթոդաբանական հարցեր, որակին առնչվող հարցեր;
- Ժամանակացույց / իրականացման պլան ՏՀՏ-ի օգտագործման նոր հետազոտության համար;
- Հաջորդ գործունեության համար (Ձ3) աշխատանքային ծրագրի նախապատրաստում;
- Հաջորդ գործունեության համար նախընտրելի ժամկետների որոշում (Ձ3)։

Արձանագրվել է ողջ ակնկալվող գործունեությունները և արդյունքների նվաճում:

Զեկույցի մեջ ներկայացված հայացքները և դիտարկումները պատկանում են ԱՊ փորձագետներին և դրանց համապատասխանությունը Դանիայի վիճակագրական ծառայությանը և Լիտվայի վիճակագրական ծառայությանը պարտադիր չէ:

4. Գնահատում և արդյունքներ

Գործունեության նպատակներն են՝

- Ստանալ ՀՀ ԱՎԾ-ի կողմից կազմվող առկա ՏՀՏ վիճակագրության նկարագիրը;
- Քննարկել ԵՄ կանոնակարգերը և առաջարկությունները ՏՀՏ-ի օգտագործման վիճակագրության վերաբերյալ;
- Ներկայացնել ԱՊ հաշվետվության ձևերը, որոնք առնչվում են ձեռնարկությունների և հաստատությունների ՏՀՏ-ի օգտագործմանը;

- Համապատասխան քննարկումների մեջ ներգրավել արտաքին շահառուներին

Հայաստանի փորձագետների հետ քննարկումների արդյունքում տրվեց ներկայիս իրավիճակի, հնարավոր խոչընդոտների և լուծումների համապարփակ նկարագիր:

4.1. ՀՀ ԱՎԾ-ի ՏՀՏ վիճակագրության ներկայիս իրավիճակը

ՀՀ ԱՎԾ-ի կողմից տեղեկատվական հանրությանը վերաբերյալ ներկայումս հավաքագրվող և հրապարակվող տեղեկատվությունը ներառում է առաջարկի մոտեցումը: Պահանջարկի մոտեցմամբ ՏՀՏ վիճակագրությունը հասանելի է միայն Հայաստանի տնային տնտեսությունների համար, բայց ոչ ձեռնարկությունների համար: Պետական կառավարման մարմինների կողմից ՏՀՏ օգտագործման վերաբերյալ տեղեկատվությունը ևս հասանելի չէ:

Ներկայումս ՀՀ ԱԱՎԾ կազմում և հրատարակում է հետևյալ առաջարկի մոտեցմամբ ցուցանիշները՝

- ՏՀՏ ծառայություններ
- ՏՀՏ արտադրանք
- Հեռահաղորդակցման արտադրանք և ծառայություններ
- ՏՀՏ արտադրանքի և ծառայությունների առևտուր

Այս ցուցանիշները ընդգրկվում են ՀՀ ԱՎԾ-ի կայքում և հրատարակվում “Հայաստանի հանրապետության սոցիալ տնտեսական իրավիճակը” և “Հայաստանի վիճակագրական տարեգրքի” մեջ:

Պահանջարկի մոտեցմամբ ձեռնարկությունների տեղեկատվությունը հասանելի է ՏՀՏ հատվածում (օր՝ հեռահաղորդակցման կազմակերպություններ, սարքավորման և ծրագրային ապահովման արտադրողներ)

ՀՀ ԱՎԾ-ի կողմից կազմվող ՏՀՏ վիճակագրության վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն ստանալու համար ուշադրություն դարձնել Հավելված 4-ին՝ ՀՀ ԱՎԾ-ի կողմից կազմվող վիճակագրությունը:

Առևտրի և այլ ծառայությունների բաժինը տարածաշրջանային գրասենյակների (տվյալների հավաքագրողներ), այլ միավորների մասնագետների, ՏՏ վարչություն (տվյալների մշակում) և Ձեռնարկությունների ռեգիստրի (համամասնություն և

ընտրանք). օժանդակությամբ ՏՀՏ վիճակագրության կազմման հիմնական պատասխանատուն է:

4.2. “Ձեռնարկությունների Ինկուբատոր” հիմնադրամի(ՁԻՀ) կողմից հավաքագրվող տվյալները

ՁԻՀ-ը բիզնեսի զարգացման և ինկուբատոր հիմնադրամ է, որն օժանդակում է Հայաստանի ՏՏ ընկերություններին, և որի նպատակն է, ի թիվս այլոց, բարելավել Հայաստանի ՏՏ ընկերությունների մրցակցությունը և ամրապնդել գիտելիքի և տեղեկատվության մատչելիությունը՝ համաձայն լավագույն պրակտիկայի և փորձի:

Տարեկան կտրվածքով, ՁԻՀ-ը հավաքագրում է հիմնական տնտեսական և ֆինանսական տվյալները Հայաստանի ՏՀՏ ձեռնարկություններից: Բացի այդ ՁԻՀ-ը նաև Հայաստանում ինժեներական սեկտորի ձեռնարկությունների հետազոտման փորձ ունի: ՁԻՀ համագործակցում է մի շարք տարբեր ոլորտի կազմակերպությունների հետ (օր՝ Հայաստանի ՏՏ ընկերությունների միություն, Արդյունաբերողների միություն, 3D ասոցիացիա), և Էկոնոմիկայի նախարարություն: ՁԻՀ տվյալները նկարագրում են առաջարկի մոտեցմամբ տեղեկատվությունը: ՁԻՀ-ի տվյալները նկարագրում են տեղեկատվության մատակարարման կողմը:

Պահանջարկի մոտեցման տեսանկյունից, ՁԻԿ-ը իրականացրել է երկու հետազոտություններ՝ դա տնային տնտեսություններում համակարգիչների օգտագործման և ինտերնետի տարածումն է և դրա կիրառումը, և այդ հետազոտությունները իրականացվել են 2008 և 2010 թվականներին:

Ներկայումս ՁԻՀ չի հավաքագրում պահանջարկի մոտեցմամբ ձեռնարկությունների ՏՀՏ տվյալներ (ՏՀՏ օգտագործում) ձեռնարկությունների կողմից:

2011թ մայիսի 4-ին կայացած անդամ պետությունների փորձագետների, ՀՀ ԱՎԾ-ի և ՁԻՀ ներկայացուցիչների հանդիպման ընթացքում ՁԻՀ ցուցաբերեց իր հետաքրքրությունը ՀՀ ԱՎԾ-ի կողմից նախաձեռնած ձեռնարկություններում և պետական կառավարման մարմիններում ՏՀՏ-ի օգտագործման վիճակագրության կազմման վերաբերյալ: Այս աշխատանքը կամբողջականացնի Հայաստանի տեղեկատվական հանրության նկարագիրը: ՁԻՀ պատրաստակամ է օժանդակել ՀՀ ԱՎԾ-ին օգտագործողների կարիքները սահմանելու հարցում, ինչպես նաև առաջարկ ստացվեց մասնակցելու հանդիպմանը, որտեղ կարող է քննարկվել հետազոտության բովանդակությունը: Ի լրումն, ՁԻՀ առաջարկեց

փորձագիտական օժանդակություն հարցաշարի S2S սահմանումների և գաղափարների գործընթացում և հայտնեց նախագծի իրանացման ընթացքում իր աջակցության պատրաստակամությունը:

4.3. Օգտագործողների կարիքները

ՀՀ ԱՎԾ նախապատրաստեց հիմնական ցուցանիշներին առնչվող օգտագործողների կարիքների նախնական ցուցակը՝

Համակարգիչ օգտագործող ձեռնարկությունների քանակը

1. Ձեռնարկությունների ընդհանուր քանակի մեջ համակարգիչ ունեցող ձեռնարկությունների տեսակարար կշիռը
2. Համակարգիչ օգտագործող աշխատակիցների քանակը
3. Համակարգիչ օգտագործող աշխատակիցների տեսակարար կշիռը
4. Ինտերնետի միջոցով պատվերներ ստացող ձեռնարկությունների քանակը
5. Ինտերնետի միջոցով պատվերներ ստացող ձեռնարկությունների տեսակարար կշիռը
6. Ինտերնետում պատվեր տվող ձեռնարկությունների քանակը
7. Ինտերնետում պատվեր տվող ձեռնարկությունների տեսակարար կշիռը

Այս ցուցանիշներում ներկայացված են հրատապ օգտագործողների կարիքները: Նույնպես կլրացվեր կարևորագույն բաց, ԵՄ և UNCTAD – անհրաժեշտ տարեկան հաշվետվությունների տրամադրումը ձեռնարկություններում S2S օգտագործման վերաբերյալ, երբ ՀՀ ԱՎԾ պատասխանում է որ „տվյալները հասանելի չեն”: Այս տվյալների ծրագրերի տեղեկագրությունը ներկայացված է հավելվածներում: Հետազոտությունը նաև կարող է օժանդակել նախարարությունների ազգային հարցադրումներին (օրինակ՝ Տրանսպորտի նախարարություն, Էկոնոմիկայի նախարարություն), վերլուծաբանների և ավելի լայն օգտագործողների շրջանակի կարիքներին:

ԱՊՓ նաև տրամադրեցին ցուցանիշների ցուցակի նախագիծ (ներկայացված է հավելված 10)։

4.4. Հնարավոր խոչընդոտները

Հետազոտության տարբեր փուլերը գնահատվեցին, և այս փուլում չհայտնաբերվեցին էական տեխնիկական, քաղաքական կամ կազմակերպչական խոչընդոտներ հետազոտության իրականացման համար: Այնուամենայնիվ, այս փուլում չկա ֆինանսավորում հետազոտության իրականացման համար:

5. Ամփոփում և առաջարկություններ

Ստորև նշված 6-րդ գլխում նկարագրված են նորմալ հարցաշարի վրա հիմնված հետազոտության անցկացման դիտարկումները, ամփոփումները և առաջարկները:

Հնարավոր խնդիրները կանխատեսելու համար առաքելության ընթացքում քննարկվեցին բոլոր փուլերը, ներառյալ վերջինը: Ամփոփումները ներկայացված են հետազոտության տարբեր փուլերի նկարագրի մեջ: Հավելված 6-ում նաև ներկայացված է գործունեությունների ժամանակացույցի նկարագիրը:

6. Հետազոտության կառուցվածքի նախապատրաստում

Առաքելության ընթացքում չպարզաբանվեց ռեսուրսների հետ կապված իրավիճակը: ԱՊ փորձագետները խորհուրդ են տալիս, որպեսզի ՏՀՏ օգտագործման վերաբերյալ հետազոտության համար անհրաժեշտ բյուջեն սահմանվի որքան հնարավոր շուտ: Նախընտրելի է, որ բյուջեն նախապատրաստվի երկու, կամ երեք տարբերակով և արտացոլի հնարավոր սցենարները՝ անդրադառնալով ՀՀ ԱՎԾ-ի ակնկալվող ֆինանսական իրավիճակին:

Ռեսուրսների անհրաժեշտությունը մասնավորապես սահմանվում է տվյալների հավաքագրման մեթոդի, ընտրանքի չափի և ընտրված ցուցանիշների քանակի համաձայն: Այսպիսով, ՀՀ ԱՎԾ-ի համար անհրաժեշտ է բալանսավորել հասանելի ռեսուրսերը հիմնական օգտագործողների կողմից պահանջվող տեղեկատվության հետ – ներառյալ մանրամասնությունների մակարդակը և նախընտրելի արդյունքների որակը/որոշակիությունը:

Համաձայն ՀՀ ԱՎԾ չկան որևէ իրավական խոչընդոտներ հետազոտության նախապատրաստման և իրականացման համար, օրինակ՝ տվյալների հավաքագրումից առաջ մասնակցող ձեռնարկությունների վաղ նախազգուշացում:

Այն պահին, երբ կհամաձայնեցվի հարցաշարի բովանդակությունը, ակնկալվում է, որ հարցաշարը կհաստատվի առանց խնդիրների և կարճատև ժամկետներում վիճակագրության պետական խորհրդի կողմից: Կարճ ասած, հարցաշարի հաստատումից հետո կարող է սկսվել տվյալների հավաքագրման գործընթացը:

ՏՀՏ հետազոտությունների ԵՄ կառուցվածքը սահմանված է համապատասխան օրենսդրությամբ և մի շարք ձեռնարկներում, որոնցից ամենակարևորները ներկայացված են ստորև՝

- Տեղեկատվական հանրության վիճակագրության կառուցվածքային կանոնակարգ (կանոնակարգ 808/2004, ինչպես նաև 1006/2009 լրացուցիչ կանոնակարգ 808/2004)
- Տարեկան ԵՄ մոդել հարցաշարը ներառյալ հետազոտության ընդհանուր նկարագիրը (ներկայացված է հավելվածում), ինչպես նաև համապատասխան իրականացման կանոնակարգը: Վերջինս ուժի մեջ է մտել 2011 թ տվյալների հավաքագրման մասով

- Տարեկան մեթոդաբանական ձեռնարկ

Այս նախագծի համար մոդել հարցաշարը համարվում է ամենաարդյունավետ փաստաթուղթը:

6.1. Հետազոտության նպատակի սահմանում

- Պարզվել են հետազոտության հիմնական հետևյալ նպատակները՝
- Հայաստանի ձեռնարկությունների(և պետական կառավարման մարմինների) կողմից ՏՀՏ արտադրանքի և ծառայությունների օգտագործում
- Եվրոպական վիճակագրությանը համադրելի ՏՀՏ օգտագործման վերաբերյալ վիճակագրության արտադրանք
- Փորձի ձեռքբերում հետագա տարիներին մի շարք տարեկան հետազոտություններ անցկացնելու համար
- Միջազգային հարցաշարերի համար անհրաժեշտ որոշակի ցուցանիշների արտադրման հնարավորություն օրինակ՝ UNCTAD, Եվրոպական Հանձնաժողովի հարցաշարեր ԱՊՀ երկրների համար և այլն:

6.2. Ընդհանուր հետազոտության նախագծի վերաբերյալ որոշում

ԱՊՓ առաջարկում են, որ հետազոտության նախագծման վերաբերյալ ընդունվի շուտափույթ որոշում: Ամբողջական հետազոտության նախագծման վերաբերյալ որոշումները, ինչպես նաև այլ հարցերը կախված են ռեսուրսների առկայությունից և օգտագործողի կարիքներից: Ցանկացած պոտենցիալ խոչընդոտ, կամ մարտահրավեր պետք է հասցեագրվի նախագծի իրականացման որքան հնարավոր է վաղ շրջանում:

6.3. Օգտագործողի կարիքների և հետազոտության շրջանակի սահմանում

Կարևոր է հավասարակշռել օգտագործողի կարիքները հասանելի ռեսուրսներով և մտապահել հարցվողների ծանրաբեռնվածության հարցը: Հավելվածների մեջ ներառված հնարավոր ցուցանիշների առաջարկները հավանաբար ընդարձակ են: Անհրաժեշտ կլինի կրճատել ցուցակը հիմնական օգտագործողների հետ համապատասխան խորհրդակցություններից հետո: Համաձայն ԱՊՓ ցուցանիշների վերջնական ցուցակը պետք է արտացոլի նաև Հայաստանի կարիքները և Եվրամիության բոլոր ցուցանիշների ընդգրկումը պարտադիր չէ:

Հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել ոլորտների միջև համեմատություններ կատարելու համար, օրինակ փոքր, խոշոր ձեռնարկություններ և հատվածներ (ձեռնարկություններ, պետական կառավարման մարմիններ, տնային տնտեսություններ):

ՀՀ ԱՎԾ-ի ներկայացուցիչները տեղեկացրեցին անմիջապես ժամանակային շարքերը հիմնելու անհրաժեշտությունը հարցաշարի մեջ ներառելով հարց անցյալ տարվա գործունեության վերաբերյալ՝ նվազագույնը հատուկ ընտրված հարցերի համար: ԱՊՓ դրական գնահատական տվեցին այդ մոտեցմանը:

6.4. Հարցաշար

Նոր հարցաշարը պետք է հետևի միջազգային հարցաշարի կառուցվածքի սկզբունքներին: Այն պետք է ունենա պարզ և տրամաբանական, մոդուլյար կառուցվածք: Հարցվողների ծանրաբեռնվածությունը նվազեցնելու համար առաջարկվում է օգտագործել ֆիլտր հարցեր, օրինակ՝ ինտերնետ հասանելիություն չունեցող ձեռնարկություններին հարց չի տրվի ինտերնետի օգտագործման վերաբերյալ:

Հարցաշարը պետք է ներառի նաև լրացման հրահանգներ ուղղված ձեռնարկություններին (այն դեպքում, երբ հարցաշարը ներկայացվում է փոստով), կամ հարցազրուցավարներին, պարզ սահմանումներ և բացատրություններ, օրինակ՝ տեխնոլոգիական տերմիններ:

ՀՀ ԱՎԾ մեթոդաբանության փորձագետները կօժանդակեն Առևտրի և այլ ծառայությունների վիճակագրության բաժնին հարցաշարի նախագծման հարցում:

6.5. Թիրախային և կառուցվածքային համակցության սահմանում

Հետազոտության թիրախային համակցությունը ձեռնարկություններն են և պետական կառավարման մարմինները:

Ձեռնարկություններ

Հետազոտության մեջ կարող են ընդգրկվել 2011 Եվրոստատի հետազոտության համաձայն 10+ աշխատակից ունեցող ձեռնարկությունները (ներկայացած է հավելված 11-ում). Ցանկության դեպքում ՀՀԱՎԾ կարող է ընդարձակել հետազոտության ընդգրկումը (օր՝ ներառել 10-ից քիչ աշխատակից ունեցող ձեռնարկությունները), եթե դա համարեն նպատակահարմար:

ԱՊ փորձագետները առաջարկում են հետևել տնտեսական գործունեությունների միջազգային դասակարգմանը (NACE rev. 2) և չափել ձեռնարկության մեծությունը (լրիվ դրույքաչափավ աշխատող աշխատակիցների քանակ):

Պետական կառավարման մարմիններ

Գործունեության ընթացքում պարզ դարձավ, որ „հաստատությունները” հիմնականում պետք է լինեն պետական կառավարման մարմինները: Կարևոր է նշել, որ պետական կառավարման մարմինների ընդգրկումը հետազոտության մեջ Եվրոպական պահանջներով նախատեսված չէ:

Թիրախային համակցությունը սահմանելու գործընթացում անհրաժեշտ է հաշվի առնել օգտագործողների կարիքները և հասանելի ռեսուրսները: Առաքելության

ընթացում որոշվեց, որ ձեռնարկությունների հետազոտությունը ավելի առաջնահերթ է, քան պետական կառավարման մարմինների հետազոտությունը: Այնուամենայնիվ, դիտարկվեց փորձառական հետազոտություն իրականացնել նաև պետական կառավարման մարմինների համար՝

1. Հիմնվելով ձեռնարկությունների հետազոտության հարցաշարի վրա՝ համապատասխան ճշգրտումներով
2. Ընդգրկելով սահմանափակ քանակությամբ պետական կառավարման մարմիններ որոշակի միանման ստորաբաժանումներով, օրինակ՝ նախարարություններ:

6.6. Ընտրանք

Ձեռնարկություններ

ԱՊ փորձագետները շեշտեցին, որ ընտրանքը պետք է լինի ներկայացուցչական թիրախային և շրջանակային համակցության համար ՏՀՏ օգտագործման վերաբերյալ և դրա նպատակը պետք է լինի ՏՀՏ օգտագործողների և ՏՀՏ չօգտագործողների ընդգրկումը:

Այս նպատակին հասնելու համար ԱՊ փորձագետները առաջարկում են իրականացնել դասակարգում ըստ տնտեսական գործունեության (NACE Rev. 2) և մեծության դասերի: Ի լրումն, հնարավոր է դիտարկել նաև ըստ մարզերի դասակարգումը, այն դեպքում երբ դա ունի ազդեցություն ՏՀՏ օգտագործման վրա:

Տվյալների հավաքագրումը կսկսվի տարածաշրջանային գրասենյակներում: Գործնական նկատառումներից ելնելով՝ պատահական ընտրանքի դեպքում, տվյալներ չեն հավաքագրվի բոլոր մարզերից: Անհրաժեշտ է համոզվել, որ ընտրված մարզերը ներկայացուցչական են թիրախային համակցության համեմատ:

Ընտրանքի մեծությունը պետք է որոշվի օգտագործողի բալանսավորված կարիքների և հասանելի ռեսուրսներին համապատասխան:

2011 թ ԵՄ պահանջներում ասված է՝ *„Ընտրանքի նախագծումը և դրա արդյունքում կազմված ընտրանքի մեծությունը պետք է լինեն համապատասխան ճշգրիտ, վստահելի և ներկայացուցչական արդյունքներ մոդել հարցաշարում նշված փոփոխականներին և միավորներին: Այս նպատակին պետք է հասնել ընդհանուր համամասնության, ինչպես նաև տարբեր բաշխումների համամասնությունների ապահովման համար...”*

Բաշխումներին առնչվող որոշակի ԵՄ պահանջների ապահովումը պարտադիր չէ, քանի որ դրանք պահանջում են բավականին խոշոր ընտրանք: Արդյունքների որոշակիության (որակի) մակարդակի հայկական օգտագործողի կարիքները պետք է կոպիտ հաշվարկվեն: Այսպիսով, հրապարակման համար բաշխումները

ըստ ոլորտի խմբի, չափսի տեսակի, հավանաբար ըստ մարզի պետք է ուշադիր ուսումնասիրվեն, նախքան ընտրանքը կատարելը:

Ակնկալվում է, որ բիզնես ռեզիստի համար պատասխանատու միավորը կոժանդակի Առևտրի և այլ ծառայությունների բաժնին ընտրանքի համար համակցություն տրամադրելու գործընթացում:

Պետական կառավարման մարմիններ

ԱՊ փորձագետները գտնում են, որ նախարարություններից բաղկացած առաջարկվող համակցությունը փորձառական հետազոտության համար հնարավոր կդարձնի իրականացնել ողջ համակցության հետազոտություն:

6.7. *Տվյալների հավաքագրում, մշակում և վերլուծություն*

ՀՀ ԱՎԾ հաշվի է առնում տվյալների հավաքագրման գործընթացը կազմակերպել հարցազրույցների միջոցով:

Անհատական հարցազրույցները ունեն որոշակի մեծ առավելություններ, օրինակ՝ փոստային հարցաշարի հետ համեմատ: Ակնկալվում է, որ հավաքագրվող պատասխանների որակը կլինի ավելի համապարփակ: Չկա հիշեցումների անհրաժեշտություն: Մյուս կողմից անհատական հարցազրույցները ավելի ծախսատար են:

Անհատական հարցազրույցների համար նապապես պետք է պատրաստվի հարցազրույցների անցկացման ուղեցույց:

Պետք է ձեռնարկվեն համապատասխան միջոցներ նվազագույնին հասցնելու չպատասխանելու, ինչպես նաև որոշ հարցերին չպատասխանելու գործակիցը:

Տվյալների մշակումը պետք է ներառի՝

- Խմբագրում տրամաբանական սխալներ գտնելու համար
- Կշռում(կառուցվածքային համակցության բարձրացում)ընտրանքում անհամապատասխանությունները շտկելու համար

Ակնկալվում է, որ SS վարչությունը կոժանդակի Առևտրի և այլ ծառայությունների բաժնին տվյալների մշակման գործընթացում:

6.8. *Փաստաթղթավորում և տարածում*

Փաստաթղթավորմանը և տարածմանը առնչվող հարցերը դեռ շատ չեն քննարկվել, այնուամենայնիվ հրատարակումը հավանական արդյունքն է: Այնուամենայնիվ, ԱՊ փորձագետները շեշտեցին այն հանգամանքը, որ գործնականում ցուցանիշների ընտրությունը սահմանում և սահմանափակում է հրատարակման բովանդակությունը:

Հետազոտության փաստաթղթերը պետք է ներառեն արդյունքների արժանահավատության գնահատումը, ինչպես նաև ԵՄ հետազոտությունների հետ համեմատությունը և համապատասխանությունը ԵՄ մեթոդաբանությանը:

Ավելին, արդյունքները պետք է համապատասխանեն օգտագործողների կարիքներին:

6.9. Առաջադրանքներ մինչև հաջորդ առաքելությունը

Կատարվելիք առաջադրանքները նշված են Հավելված 8-ում „մինչև հաջորդ գործունեությունը ՀՀԱՎԾ-ի կողմից անհրաժեշտ գործողությունների իրականացում”: Գրավոր նյութերը պետք է նախապատրաստվեն անգլերեն լեզվով:

6.10. Թվինինգ նախագծի ավարտից հետո

ԵՄ ՏՀՏ-ի օգտագործման հետազոտությունները իրականացվում են տարեկան կտրվածքով: Թվինինգ նախագծի ընթացքում հետազոտության շարունակությունը և համախմբումը և դրա հաճախականությունը պետք է հաշվի առնվի:

7. Հավելվածներ

Հավելված 1 Տեխնիկական առաջադրանք

ԵՄ Թվինինգ Ծրագիր

Աջակցություն Հայաստանի Ազգային Վիճակագրական Ծառայությանը
Թվինինգ Ծրագրի Միջոցով
AM09/ENP-PCA/TP/04

Նախագիծ Տեխնիկական Առաջադրանք (Ձ1-2)մայիսի 2 – 6 2011թ

Բաղադրիչ Ա Որակի Կառավարում
Բաղադրիչ Բ Բիզնես Ռեզիստոր, Կառուցվածքային Բիզնես Հետազոտություն և Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածություն
Բաղադրիչ Գ ՀՆԱ –ի Ամբողջականության Բարելավում
Բաղադրիչ Դ Գյուղատնտեսության Համատարած Հաշվառում
Բաղադրիչ Ե Հարմոնիզացված Սպառողական Գների Ինդեքս
Բաղադրիչ Զ Տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների հանրության վիճակագրություն

Գործունեություն Ձ1 Հարցերի սահմանում

1. Գործունեության նպատակը

Նպատակները հետևյալն են՝

- Ստանալ ՀՀԱՎԾ-ի կողմից արտադրվող առկա ՏՀՏ վիճակագրության նկարագիրը
- Քննարկել ԵՄ կանոնակարգերը և առաջարկությունները ՏՀՏ –ի օգտագործման վիճակագրության վերաբերյալ
- Ներկայացնել ԱՊ հաշվետվության ձևերը կազմակերպություններում ՏՏ տեխնոլոգիաների օգտագործման վերաբերյալ
- Համապատասխան քննարկումներում ներգրավել արտաքին շահառուներին

2. Ակնկալվող արդյունքը և գործողությունները

Գործողությունների ակնկալվող արդյունքները հետևյալն են՝

- Վերլուծություն, թե որ միավորներն են ընդգրկվելու ՏՀՏ օգտագործման վիճակագրության մեջ
 - ՏՀՏ հանրության վիճակագրության հետ կապված ձեռնարկությունների սահմանում
 - ՏՀՏ հանրության վիճակագրության հետ կապված կազմակերպությունների սահմանում

- Կքննարկվեն և կսահմանվեն այլ հիմնական գաղափարներ կապված SՀS օգտագործման վիճակագրության հետ՝ – մեթոդաբանական հարցեր, որակի խնդիրներ;
- SՀS օգտագործման վերաբերյալ նոր հետազոտության նախագծում/ իրականացման պլան
- Հաջորդ գործունեության ծրագրի մշակում (Զ 3)
- Հաջորդ գործունեության նախընտրելի ժամանակի որոշում(Զ 3)

3. Ծրագրի մասնակիցները

Պրն. Գագիկ Անանյան, Վիճակագրության պետական խորհրդի անդամ (ՇԵ Բաղադրիչի ղեկավար:)

Տկն. Անահիտ Հարությունյան, Առևտրի և այլ ծառայությունների վիճ. բաժնի պետ
Տկն. Ինգա Բարոյան, Առևտրի և այլ ծառայությունների վիճ. բաժնի գլխավոր
մասնագետ

Տկն. Հեղինե Բաբայան, Առևտրի և այլ ծառայությունների վիճ. բաժնի գլխավոր
մասնագետ

Տկն Մարիամ Դալլաբյան, Առևտրի և այլ ծառայությունների վիճ. բաժնի
առաջատար մասնագետ

Պրն. Մարտին Լունդո, Բիզնեսի զարգացման բաժնի գլխավոր
խորհրդատու,Դանիայի վիճակագրական ծառայություն (*ՄՊ Բաղադրիչի
ղեկավար*)

Տկն. Ագնես Տասսի, Բիզնեսի զարգացման բաժնի գլխավոր խորհրդատու, Դանիայի
վիճակագրական ծառայություն

Պրն. Գեղիմինաս Սամուլիս, Տեղեկատվական տնտեսության բաժնի պետ,
Լիտվայի վիճ. ծառայություն

Արտաքին շահառուներ, որոնք մասնակցում են գործունեությանը

“Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ” (Երևանում հիմնված
կազմակերպություն, որը օժանդակում է SՀS ձեռնարկությունների զարգացմանը)

Հավելված 2 Առաքելության ծրագիրը

Ժամը	Վայրը	Միջոցառում	Նպատակ/Միջոցառման մանրամասները
Երկուշաբթի, առավոտյան	Կոնգրես հյուրանոց	Հանդիպում ԹՄԽ-ի հետ	Շաբաթվա ծրագրի քննարկում
Երկուշաբթի, կեսօրին	ՀՀԱՎԾ	Հանդիպում ՇԵ Բաղադրիչի ղեկավարի և ՇԵ փորձագետների հետ	ՀՀԱՎԾ առկա ՏՀՏ վիճակագրության ներկայացում: Նոր հետազոտության քննարկում՝ - Որ միավորներն են ընդգրկվելու - Որ ՏՏ ոլորտներն են ընդգրկվելու - Ինչ տեղեկատվական աղբյուրներ են հասանելի ընտրանք կատարելու համար (բիզնես ռեգիստր, Ինկուբատոր և այլն)
Երեքշաբթի, առավոտյան,	ՀՀԱՎԾ	Ներկայացում	ԱՊ ներկայացումը ՏՀՏ օգտագործման վիճակագրության մասին ԵՄ կանոնակարգին համաձայն
Երեքշաբթի, կեսօրին,	ՀՀԱՎԾ	Քննարկումներ կլոր սեղանի շուրջ	Կազմակերպություններում և ձեռնարկություններում ՏՀՏ օգտագործման վերաբերյալ իրականացվող հետազոտությունների մասին ԱՊ փորձագետների կողմից իրենց փորձի ներկայացում: Խնդիրներ, խոչընդոտներ և այլ մարտահրավերներ: Օգտագործվող վիճակագրական ձևերի/հարցաշարերի նախագծում Հաղորդակցության ռազմավարություն
Չորեքշաբթի, առավոտյան,	?	Հանդիպում	Հանդիպում Ինկուբատորի և բիզնես ռեգիստրի բաժինների հետ
Չորեքշաբթի, կեսօրին,	ՀՀԱՎԾ	Հանդիպում ՇԵ փորձագետների հետ	Նոր հետազոտության նախնական նախագծում/քննարկում

Հինգշաբթի, առավոտյան	ՀՀԱՎԾ	հատուկ հանդիպում- ներ	Բաղադրիչի շրջանակում հետագա ժամանակացույցի քննարկում և Ձ3- Ձ6 գործունեությունների հետագա քայլերի քննարկում
Հինգշաբթի, կեսօրին	ՀՀԱՎԾ	Հանդիպում ԹՄԽ հետ	Նախնական բրիֆինգ: Առաքելության զեկույցի բովանդակության և կառուցվածքի համաձայնեցում: ՇԵ նախագծի ղեկավարի համար պատրաստված ներկայացման քննարկում
Ուրբաթ, առավոտյան	ՀՀԱՎԾ	Հատուկ հանդի- պումներ	Հետագա աշխատանքներ ժամանակացույցի, առաքելության զեկույցի և ՇԵ բաղադրիչի ղեկավարի համար նախապատրաստված ներկայացման շրջանակում
Ուրբաթ, կեսօրին	ՀՀԱՎԾ	Հանդիպում ՇԵ նախագծի ղեկավարի հետ	Բրիֆինգ, եզրակացություններ և առաջարկություններ, ինչպես նաև նախքան հաջորդ (Ձ3) գործունեության ՇԵ փորձագետների կողմից անհրաժեշտ աշխատանքների կատարումը

Հավելված 3 Հանդիպումներ անձանց հետ

Առաքելության ընթացքում ԱՊ փարձագետները հանդիպել են հետևյալ անձանց հետ

Անահիտ Սաֆյան – Բաժնի պետ	Միջազգային վիճակագրական համագործակցության բաժին
Հասմիկ Եղիազարյան – Առաջատար մասնագետ	Միջազգային վիճակագրական համագործակցության բաժին
Ռուզաննա Շաբոյան- 1-ին կարգի մասնագետ	Միջազգային վիճակագրական համագործակցության բաժին
Գայանե Վարդանյան, 1-ին կարգի մասնագետ	Առևտրի և այլ ծառայությունների բաժին
Անահիտ Առաքելյան, 1-ին կարգի մասնագետ	Առևտրի և այլ ծառայությունների բաժին
Աննա Անտոնյան	Առևտրի և այլ ծառայությունների բաժին
Արևիկ Սազումյան, Առաջատար մասնագետ	Առևտրի և այլ ծառայությունների բաժին
Ինգա Բարոյան, Գլխավոր մասնագետ	Առևտրի և այլ ծառայությունների բաժին
Հեղինե Բաբայան, Գլխավոր մասնագետ	Առևտրի և այլ ծառայությունների բաժին
Անահիտ Հարությունյան – Բաժնի պետ	Առևտրի և այլ ծառայությունների բաժին
Նատալյա Պողոսյան, Վարչության պետ	SS զարգացման վարչություն
Կարինե Արամյան, Առաջատար մասնագետ	Բիզնես ռեգիստրի բաժին
Լաուրա Սարգսյա, 1-ին կարգի մասնագետ	Բիզնես ռեգիստրի բաժին
Գարիկ Խաչատրյան – Գլխավոր մասնագետ	Բիզնես ռեգիստրի բաժին
Լայերտ Հարությունյան - Բաժնի պետ	Բիզնես ռեգիստրի բաժին
Գեորգի Թորոսյան, Բաժնի պետ	Տրանսպորտի և հեռահաղորդակցման բաժին
Լուսինե Մարկոսյան, Գլխավոր մասնագետ	Տնային տնտեսությունների հետազոտությունների բաժին
Աշոտ Անանյան – Բաժնի պետ	Արդյունաբերության վիճակագրության բաժին
Նադեժդա Աստվածատուրովա, Գլխավոր մասնագետ	Ազգային հաշիվների բաժին
Աստղիկ Ալեքսանյան - Առաջատար մասնագետ	Էկոնոմիկայի նախարարության Տեղեկատվական տեխնոլոգիաների վարչություն
Բագրատ Ենգիբարյան- տնօրեն	“Ձեռնարկությունների Ինկուբատոր”

հիմնադրամ”

**Հավելված 4 ՀՀԱՎԾ-ի կողմից հավաքագրվող ՏՀՏ վիճակագրությունը
(ՏՀՏ արտադրություն)**

Բնութագիր, տվյալներ, բովանդակային ցուցանիշներ	Աղբյուր (հետազոտություն, վարչական ռեգիստր)	Հաճախականություն	Ով է ներառված վիճակագրության արտադրության մեջ	Հրապարակում, տարածում ժամանակաշրջան
ՏՀՏ ծառայությունների ոլորտ NACE խմբ.2 Բաժին J հատվածներ 58.21.0, 58.29.0, 62.01.0, 62.02.0, 62.09.0, 63.1	Ցուցանիշները հավաքագրվում են Ձև թիվ 1-ՏՏ “Տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվական ծառայությունների մասին հաշվետվության ձևով	Ամսական, եռամսյակային պարբերականությամբ	Հաշվետվությունը ներկայացնում են ՏՏ ոլորտի 124 կազմակերպություններ	„Հայաստանի հանրապետության սոցիալ տնտեսական վիճակը” տեղեկատվական ամսական զեկույց, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, ՀՀ ԱՎԾ ինտերնետային կայք
ՏՀՏ առևտրի ոլորտ NACE խմբ.2 Բաժին G հատվածներ 46.51.0, 46.52	Ցուցանիշները հավաքագրվում են Ձև թիվ 1-„Առևտրի շրջանառության մասին” հաշվետվության ձևով	Եռամսյակային պարբերականությամբ	Հաշվետվությունը ներկայացնում են 5 կազմակերպություններ	-//-
ՏՀՏ արտադրության ոլորտ NACE խմբ. 2 Բաժին C հատվածներ 26.11.0, 26.12.0, 26.20.0, 26.30.0, 26.40.0, 26.80.0	Ցուցանիշները հավաքագրվում են Ձև թիվ 1-րդյունաբերական „ձեռնարկությունների արտադրանքի մասին շրջանառության մասին” հաշվետվության ձևով	Եռամսյակային պարբերականությամբ	Հաշվետվությունը ներկայացնում են 39 կազմակերպություններ	-//-
ՏՀՏ հեռահաղորդակցության ոլորտ NACE խմբ. 2 Բաժին J հատված 61	Տվյալները հավաքագրվում 13 հաշվետվության ձևով- հաղորդակցություն	Եռամսյակային պարբերականությամբ	Հաշվետվությունը ներկայացնում են 200 կազմակերպություններ	-//-

Հավելված 5 PowerPoint ներկայացումներ

- Ազնես Տասսի՝ ԵՄ կանոնակարգ
- Գեդիմանաս Սամուլիս՝ Լիտվայի ՏՀՏ վիճակագրություն- ոլորտներ և կառուցվածք
- Մարտին Լունդո՝ ՏՀԶԿ մոդել, ՏՀՏ-ի օգտագործումը Դանիայի ձեռնարկություններում

Բոլոր ներկայացումները կտեղադրվեն նախագծի կայքում: Ներկայացումները նաև ներառում են լրացուցիչ նյութեր, որոնք ժամանակի սղության պատճառով չեն ներկայացվել հանդիպումների ընթացքում:

Հավելված 6: Գործունեությունների ժամանակացույց

Նախնական ընդհանուր ծրագիր ձեռնարկություններում և հաստատություններում ՏՀՏ օգտագործման հետազոտության իրականացման համար

Ժանկետը	Առաջադրանքը
1 Օգոստ. 2011	Որոշում տվյալների հավաքագրման մեթոդների վերաբերյալ
1 Սեպտ. 2011	Ընտրված ցուցանիշների ծավալուն ցանկը
1 Դեկտ. 2011	Ավարտված հարցաթերթիկներ
1 Փետր. 2012	Տվյալների նախագծման և պահեստավորման համար համակարգչային ծրագրի մշակում
1 Փետր. 2012	Տվյալների հավաքագրման սկիզբը
1 Մայիս 2012	Տվյալների հավաքագրման ավարտը, տվյալների մուտքագրում և խմբագրում
1 Հունիսի 2012	Տվյալների բազայի հիմնադրում
1 Հոկտ. 2012	Տվյալների վերլուծությունների ավարտը
1 Նոյեմ. 2012	Արդյունքների հրապարակում

Առաջադրանքների վերանայում

Առաջադրանք / փուլ	Բովանդակություն	Վերջնա- ժամկետ/ ժամկետ	Նախա գծի գործու նեու- թյուն
0. Սահմանել հետազոտության նպատակը	Տրամադրել համապատասխան և վստահելի տեղեկատվություն Հայաստանի ձեռնարկություններում և պետական կառավարման մարմիններում ՏՀՏ օգտագործման վերաբերյալ	Մայիսի 15. 2011	F1
	Աշխատել համաձայն ԵՄ պահանջներին (մեթոդաբանություն, ցուցանիշներ)		
	Առկա ՏՀՏ վիճակագրությունը դարձնել ավելի ամբողջական		
	Տվյալների տրամադրում ՄԱԿ-ին, ԵՄ և այլ միջազգային կազմակերպություններին		
1. Հետազոտության ընդհանուր կառուցվածքի որոշում	Ռազմավարություն և հիմնական պլանավորման խնդիրներ ներառյալ տվյալների հավաքագրման մեթոդներ	Դեկտեմբեր . 2011	F5
1.1. Օգտագործողի կարիքների և հետազոտության կառուցվածքի սահմանում	Օգտագործողների կարիքների հնարավոր լսումներ	Սեպտեմբեր . 2011	F5
	Ցուցանիշների ցուցակ	Սեպտեմբեր 2011	
1.2. Հարցաշար	Հարցեր + դիզայն	Դեկ. 2011	F3
	Լսումներ (պարտադիր չէ)		
	Թեսթավորում (պարտադիր չէ)		
	Ուղեցույց + հրահանգներ (վերապատրաստում) դաշտում աշխատողների համար անհատական հարցազրույցների միջոցով տվյալների հավաքագրման դեպքում	Փետրվար. 2012	
1.3. Թիրախային համակցուկցություն (նախընտրելի		Նոյեմբեր 10. 2011	F3

ընդգրկում)			
1.4. Շրջանակային համակցություն (իրական ընդգրկում)	Բիզնես ռեզիստ	Նոյեմբեր 15.. 2011	F3
	Հաստատությունների ցուցակ		
	Սահմանագծում (ուրտ, խմբեր, - չափս, հավանաբար շրջաններ, հաստատություններ)		
	Ընդգրկման հնարավոր թերությունների գնահատում		
1.5. Ընտրանք	շերտավորություն(գործունեություն ըստ Nace 2 դասակարգչի լրիվ դրույքով աշխատող աշխատակիցների քանակ ըստ խմբերի մեծության և հնարավոր շրջանների)	Դեկտեմբեր. 2011	F3
	Ընտրանքի տեսակ (օր՝ պատահական, ստրատիֆիկացված)		
2. Տվյալների հավաքագրում	Մեթոդ (փոստով ներկայացվող հարցաշար կամ նշանակված հարցազրուցավարներ)	Մայիս 2012	
	Տվյալների հավաքագրման համակարգ		
	Հարցազրույցների վարում		
	Փոստով ներկայացվող հարցաշարերի դեպքում հիշեցումների համակարգ		
3. Տվյալների մշակում	Տվյալների համախմբում	Հունիսի 1, 2012	F4
	Խմբագրում, սխալների ուղղում		
	Կշռման միջոցով արդյունքների ստացում		
4. Տվյալների վերլուծություն	Աղյուսակների ծրագիր վերլուծությունների համար	Հոկտեմբեր 1. 2012	F4
	Որակի և ներկայացուցչության գնահատում		
	Համադրելիությունը ԵՄ և այլ երկրներին		

5. Փաստաթղթավորում և տարածում	Աղյուսակներ և գծագրեր հրատարակման համար	նոյեմբեր. 2012	F6
	Արդյունքների նկարագրում բացատրություններ և այլն		
	Հետազոտության փաստաթղթավորում		

Հավելված 7 Առաքելությունների ժամկետների նախագիծ պլանավորում

Ենթակա է ստուգման մասնակիցների կողմից

Թվինիսգ նախագծի գործունեություն	Ժամկետներ	Թեմաներ և արդյունքներ
F1-F2	Մայիսի 2-6, 2011	Խնդիրների պարզում, առկա իրավիճակի գնահատում, ԱՊ փորձառության ներկայացում, ծագող խնդիրների քննարկում, ժամանակացույցի կազմում
F5	Սեպտեմբերի 26-30, 2011 (?)	Ուսուցողական այցելություն Դանիայի վիճակագրական ծառայություն: ՇԵ փորձագետներին կներկայացվի Դանիայի S2S վիճակագրությունը: Հարցաշարի դիզայնը և հրահանգները, պահուստավորումը և տվյալների մշակումը, ստրատիֆիկացիան և տվյալների մշակումը, աղյուսակների մեջ ներկայացում և վերլուծողական գործիքներ
F3	Նոյեմբերի 7-11, 2011 (?)	Ընտրանքի մեթոդ: Համակցության և ընտրանքի մեթոդների սահմանում: Վերջնական ներանցում հարցաշարին:
F4	Հունիսի 11-15, 2012 (?)	Վերլուծություն և տվյալների մշակում: Հետազոտության նախնական արդյունքների քննարկում, տարածման ռազմավարության սահմանում, արտադրության համակարգի համախմբում
F6	Նոյեմբերի 19-23, 2012 (?)	Իրականացման վերանայում: Ստացված արդյունքների վերանայում

Հավելված 8: Մինչև հաջորդ գործունեությունը ՀՀԱՎԾ-ի կողմից անհրաժեշտ գործողությունների իրականացում

Բոլոր գրավոր նյութերը պետք է տրամադրվեն ԱՊ փորձագետներին անգլերեն լեզվով Դանիա այցելությունից մեկ շաբաթ F5 առաջ:

- Հետազոտության կառուցվածքի որոշում(ներառյալ օգտագործողի ցուցանիշների կարիքները և թիրախային համակցությունը թե՛ ձեռնարկությունների և թե՛ պետական կառավարման մարմինների համար)
- Ռեսուրսների գնահատում (ներառյալ ֆինանսական ռեսուրսները) հետազոտության իրականացման համար
- Ցուցանիշների ցուցակի նախագիծը, որը պետք է ներառվի հետազոտության մեջ, հարցաշարի նախագիծը:

Հավելված 9: SՀS վիճակագրության գործող միջազգային հաշվետու համակարգերը

- Unctad-ի հարցաշարը ձեռնարկությունների SՀS օգտագործման և SՀS հատվածի վերաբերյալ
- Եվրոստատի տվյալների հարցաշարը („Անցումային երկրների հետ վիճակագրական համագործակցություն”).

Չի կցվում , հասանելի է էլեկտրոնային տարբերակով:

**Հավելված 10: Ցուցանիշների և թեմաների ցուցակ – ձեռնարկություններում
ՏՀՏ-ի օգտագործում**

No	Ձեռնարկություններում ՏՀՏ օգտագործումը	Եվրոստատի հարցաշար				UNSTAD		ՏՀԶԿ		Դանիա	Լիտվա
		2012	2011	2010	դիտո- դություններ	2010	դիտո- դություններ	2005	դիտո- դություններ	2011	2011
	Համակարգիչների և համակարգչային ցանցերի օգտագործում										
A1	Համակարգիչ օգտագործող ձեռնարկությունների քանակը (բաժնեմասը) (ներառյալ անձնական համակարգիչները, նեթ թուփերը, դյուրակիր համակարգիչները (<i>օրինակ՝ լափթոփ նոթբուկ, նեթբուկ, անձնական թվային օժանդակիչ (PDA)</i>))	X	X	X		X		X		X	X
A2	Նվազագույնը շաբաթը մեկ անգամ համակարգիչ օգտվող աշխատակիցների քանակը (բաժնեմասը)	ՊԶ	ՊԶ	ՊԶ		X					X
A3	Ներքին համակարգչային ցանց (օրինակ՝ տեղական ցանց LAN) օգտագործող ձեռնարկությունների քանակը (բաժնեմասը)			X		X		X		X	X
A4	Ներքին գլխավոր էջ (Ինտրանետ) ունեցող ձեռնարկությունների քանակը (բաժնեմասը)			X		X		X		X	X
A5	Հետևյալ տեղեկատվությունը փոխանցելու համար ներքին գլխավոր էջ օգտագործող ձեռնարկությունների քանակը (բաժնեմասը)										
	ա) Ձեռնարկության հիմնական քաղաքականությունը կամ ռազմավարությունը				հարցաշարի մոդել 2008						
	բ) Ձեռնարկության ներքին տեղեկագիր, կամ ամենօրյա նորություններ										
	գ) Առօրյա / աշխատանքային փաստաթղթեր (օր՝ նախատեսված հանդիպումների համար)										
	դ) Ձեռնարկներ, ուղեցույցներ, կամ վերապատրաստման նյութեր										
	ե) ապրանքների, կամ ծառայությունների կատալոգներ										
A6	Էքստրանետ ունեցող ձեռնարկությունների քանակը (բաժնեմասը)			X		X		X			
A7	Երրորդ կողմի հասանելի ծրագրային ապահովում օգտագործող ձեռնարկությունների քանակը (բաժնեմասը), կարելի է տարանջատել ենթախմբերի		ՊԶ	X						X	X
A8	SS ծրագրային ապահովում օգտագործող ձեռնարկությունների քանակը (բաժնեմասը), որոնք աշխատակիցներին տրամադրում են հեռահար մատչելիություն ձեռնարկության էլ-փոստի համակարգ, փաստաթղթերին, կամ ծրագրերին (ինտերնետին ֆիքսված, շարժական,	ՊԶ								X	

	կամ անլար միացում)										
A9	S2S/SS աշխատակից ունեցող ձեռնարկությունների քանակը (բաժնեմասը)	X									
A10	Հաշվետու տարվա ընթացքում ձեռնարկությունների քանակը (բաժնեմասը), որոքնք աշխատանքի են ընդունել, կամ փորձել են աշխատանքի ընդունել S2S մասնագետներ	X									
A11	S2S/SS մասնագետներ ընդունելու դժվարություններ ունեցող ընկերությունների քանակը (բաժնեմասը)	X									
A12	S2S և անձնակազմի համապատասխան հմտությունները բարելավելու համար վերապատրաստում անցկացնող ձեռնարկությունների քանակը (բաժնեմասը)										
	ա) S2S/SS մասնագետների համար վերապատրաստում	X									
	բ) Այլ աշխատակիցների համար վերապատրաստում	X									
A13	Ձեռնարկությունների քանակը (բաժնեմասը), որտեղ առկա է աշխատակիցների մատչելիությունը անհատական մարդկային ռեսուրսների ծառայություններին էլեկտրոնային ձևով, օրինակ՝ աշխատաժամի գրանցման համակարգին, տարեկան արձակուրդի դիմումին, վճարման թերթիկին և այլն		X							X	X
A14	Ձեռնարկության համակարգիչների քանակը (<i>բիզնես հատվածում</i>)										
	<i>Կարող են ավելացվել համակարգիչների օգտագործման խոչընդոտներին առկաող հարցեր</i>										
	<i>Մոդուլ F՝ Ինտերնետի մատչելիություն և օգտագործում</i>										
B1	Ինտերնետ օգտագործող ձեռնարկությունների քանակը(բաժնեմասը)	X	X	X		X		X		X	X
B2	Նվազագույնը շաբաթը մեկ անգամ Ինտերնետ օգտագործող աշխատակիցների քանակը (բաժնեմասը)	X	ՊԶ	X		X		X			X
B3	<i>Ինտերնետ կապի տեսակ (ձեռնարկությունների բաժնեմասը):</i>										
	ա) dial-up մատչելիություն նորմալ հեռախոսագծի միջոցով, կամ ISDN կապ	X	X	X		X	տարանջատված է լայնաշերտ և նեղաշերտի միջև (ֆիքսված և շարժական)			X	X
	ա1) dial-up մատչելիություն նորմալ հեռախոսագծի միջոցով							X			
	ա2) ISDN կապ							X			
	բ) DSL (xDSL, ADSL, SDSL և այլն) կապ	X	X	X		X		X		X	X
	գ) Օպտիկամանրաթելային կապ									X	X
	դ) մալուխային մոդեմ							X			
	ե) Այլ ֆիքսված ինտերնետ կապ (վարձակալված կապուղի, ֆիքսված անլար կապ)	X	X	X		X		X		X	X
	զ) Շարժական կապ (օր՝ անալոգային շարժական կապ, GSM, GPRS, UMTS,					X					

	EDGE, CDMA2000 1xEVDO)										
	զ1) Շարժական լայնաշերտ կապ (նվազագույնը 3G մոդեմով, կամ 3G հեռախոսով) օգտագործելով օր՝ UMTS, CDMA2000 1xEVDO, HSDPA	X	X	X						(X)	X
	զ1-1)դյուրակիր համակարգչի միջոցով նվազագույնը 3G մոդեմով օրինակ՝ նոթբուկ, նեթբուկ, լափթոփ, , Ultra Mobile PC-UMPC, PC օգտագործող օր՝ UMTS, CDMA2000 1xEVDO, HSDPA	ՊԶ	ՊԶ	ՊԶ						X	
	զ1-2) հեռախոսի միջոցով նվազագույնը 3G տեխնոլոգիայով օր՝ Smartphone, PDA հեռախոսներ, որոնք օգտագործում են UMTS, CDMA2000 1xEVDO, HSDPA	ՊԶ	ՊԶ	ՊԶ						X	
	զ2)Այլ շարժական կապ օգտագործելով օրինակ՝ անալոգային շարժական հեռախոս, GSM, GPRS, EDGE	X	X	X						X	X
B4	Ամենաարագ ինտերնետ կապի մաքսիմալ ներբեռնման (download) արագություն ունեցող ձեռնարկությունների քանակը (բաժնեմասը)										
	ա) ավելի քիչ քան 2 Մբ/վ	X	X							X	X
	բ) նվազագույնը 2 բայց ոչ պակաս քան 10 Մբ/վ	X	X							X	X
	գ) նվազագույնը 10 բայց ոչ պակաս քան 30 Մբ/վ	X	X							X	X
	դ) նվազագույնը 30 բայց ոչ պակաս քան 100 Մբ/վ	X	X							X	X
	ե) նվազագույնը 100 Մբ/վ	X	X							X	X
B5	Ինտերնետի օգտագործման նպատակները (ձեռնարկությունների բաժնեմասը)										
	ա) բանկային և ֆինանսական ծառայություններ			X				X			
	բանկային					X					
	ֆինանսական ծառայություններ					X					
	բ) վերապատրաստում և կրթություն			X		X		X			
	գ) Շուկայի մոնիթորինգ (դիտարկում)				մոդել 2006-2007						
	դ) թվային ապրանքների և ծառայությունների ստացում										
	ե) վաճառքի հետերաշխիքային սպասարկման ծառայություն										
